արդարեղը), *ձէթ*, *ձիթապտուղ*, *պանիր*, *ձաւար* (պուլղուր), *կորկոտ*, *բրինձ*, սիմիթ *կամ* փրթփրթ, էօրիւշտէ, մախաննա, կիլապուլու (*որ կը պահէին կարասներու մէջ պարզ ջուրով*) ալըն (*ալուճ*), փիւրչիւֆլիւ (*ստեպղին*), նէվէնկ (*խաղող*) չամիչ (*գիւղերը*), *զղեար* (մուշմուլլա), իյտէ (*փշատ*). *տանձ*, *խնձոր*, *չոր թութ*, *սալոր*, *չոր տանձ*, *չոր ծիրան* (եարմաչա) *սերկեւիլ* (*որ իբր բանջարեղէն ալ կը գործածուէր*), *ընկոյզ*, րէչէլ (*խաղողի հիւթի մէջ պահուած խաղողի ողկոյզներ*), *ռուփեր* (1) (*կեսարական բառով* փէրվէրտէ), սունուխ (*չարոց կամ Եվէրէկի բարբառով* պանտըրմա), ֆէօֆտէր (*Եվէրէկի* նուխտակը), պէսթիլ, *օղի*, *գինի*, *քացախ*, *չորցուած բանջարեղէններ*, փաթլըճան (*սմբուկ*), *պամիա*, *դդում*, *կանանչ բակլայ*, *կանանչ լուբիա*, *ոլոռ*, *բողկ*, *սեխ*, *ձմերուկ*, *կաղամբ*, *սոխ*, *սխտոր*, *կարմիր պղպեղ*, *ռէհան*, *տեսակ տեսակ համեմներ*, *ինչպէս չաման* (*Հացհամեմ*), քիմիոն (*քեմոն*), *անիսոն*, բարչըն (*կասի*) *եւայլն*։

Երբ-որ *պղպեղ* (*Կեսարացիք կ'ըսեն* պիպէր *և Եվէրէկցիք* տախտեղ), մաղտանոս (*ազատքեղ*), *լօլիկի սալցա*, *սոխ*, *սխտոր*, չաման (*հացհամեմ*), քիմիոն (*քեմոն*), *անիսոն*, բարչըն (*կասի*) *եւայլն*։

Ձմեռնային պաշարի մաս կը կազմէին նաև թուրշիներու (*թթուներու*) *զանազան տեսակները*։ *Այսպէս* թուրշի *կը դրուէին մանրուք դդումներ*, *պզտիկ ձմերուկներ և սեխեր*, *վարունգներ*, *ստեպղիններ*, *ճակնդեղներ*, *կաղամբներ*, *սմբուկներ*, *լօլիկներ*, *ամենայարգին էր խընձորինը*։

Այսպէս ուրեմն Կեսարիոյ և շրջակայ գիւղերու Հայ կիները աշնան 2–3 ամիսներուն ընթացքին տքնաջան աշխատութեամբ կ'ամբարէին իրենց տարեկան ամբողջական մթերքը ու տարուան ընթացքին չունէին այլեւս գէթ այդ մտահոգութիւնը որ այժմ գրեթէ բոլոր քաղաքներու կիներուն առօրեայ զբաղմանը առարկան է։

Պ.

ԸՆՏԱՆԻՔ

Ա.

ՕՃԱԽԻ ԿԵԱՆՔ

Ընտանիքը՝ Հայ նահապետական բարքերու համաձայն, կ'ապրի տան մէջ բոլորուած, շուրջը տան կրակին, հոն է ընտանիքին կեանքը։ *Ծխանէն բարձրացող ծուխը արտաքուստ նշան մըն է թէ այդ երդիքին տակ կ'ապրի ընտանիք մը*, *նոյնպէս* օճախին *կամ* թոնիրին *վառ վիճակը՝ ներքուստ խորհրդանշան է կեանքի և շարժման*, *ուստի* օճախը *ընտանիքին նուիրական գաղափարին նշանակը դարձած է*։

Ինչպէս Հայաստանի նոյնպէս նաև Կեսարիոյ մէջ երբ եղբայրներ

---

(1) *Ինչպէս դդումի* (*Եվէրէկ* մար դդումի=ասմա խապախ), *սմբուկի*, *սերկեւիլի*, *ծիրանի*, *սեխի*, *լօլիկի ռուփերը*. չալմա (*Եվէրէկի լեզուով* աղտա) *և վերջապէս* շէրպէթցու։